ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Հանրային առողջապահության, կառավարման, առողջապահության կազմակերպման ամբիոն

«ՏաՀույս գիտակրթական կենտրոն» ՍՊԸ

«Մարդկային ռեսուրսների կառավարում»

Կրեդիտավորված դասընթաց

2022թ. մայիսի 12-21-ը ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտը «ՏաՀույս գիտակրթական կենտրոն» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպում է «Մարդկային ռեսուրսների կառավարում» հնգօրյա կրեդիտավորված դասընթաց:

Դասընթացի նպատակը

Հաղորդել գիտելիքներ մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման տեսությանն ու պրակտիկային առնչվող հիմնական սկզբունքների, ուղղությունների և հայեցակարգերի վերաբերյալ, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ կարողություններ՝ բուժհիմնարկներում անձնակազմի կառավարման և զարգացման խնդիրներին համապարփակ ու գործնական լուծումներ տալու համար:

Դասընթացի խնդիրները

Արժևորել մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման անհրաժեշտության կարևորությունը՝ բուժհիմնարկների արդյունավետ կառավարման համար:

Հաղորդել գիտելիքներ և զարգացնել կարողություններ՝ անձնակազմի կառավարման գործուն համակարգի ներդրման և արդյունավետ գործունեության համար:

Ձևավորել բարենպաստ կազմակերպության մշակույթ՝ բուժհիմնարկներում անձնակազմի կառավարման պրոֆեսիոնալ գործառույթի, մասնագետների ներգրավման և արդյունավետության ապահովման համար:

Դասավանդման և ուսուցման մեթոդներ

Դասախոսություններ, նյութի ներկայացում՝ օգտագործելով Powerpoint ծրագիրը

Մասնագիտական նյութերի յուրացում և վերլուծում՝ անհատական և խմբային քննարկումների միջոցով

Իրավիճակային խնդիրների լուծում

Թեմատիկ հետազոտական աշխատանքների արդյունքների ամփոփում և ներկայացում /project papers/

Դասընթացի արդյունքում մասնակիցները կկարողանան

Մշակել և սահմանել ՄՌ գործառույթի նպատակներն ու խնդիրները

Սահմանել աշխատողների անհատական նպատակներն ու պլանները՝ կազմակերպության ռազմավարությանը համահունչ

Մշակել և ներդնել գործիքներ, որոնք ապահովում են գործարար էթիկայի սկզբունքներն ու նպատակները

Մշակել ՄՌ ռազմավարության և դրա կիրառման համար անհրաժեշտ քաղաքականություն

Ձևավորել անձնակազմի կառավարման ստորաբաժանում և ստեղծել համապատասխան մեխանիզմներ՝ դրա բնականոն ու արդյունավետ աշխատանքի ապահովման համար

Մշակել աշխատանքային բնութագրեր, իրականացնել աշխատանքի ծավալների և շրջանակների հստակեցում

Ցուցաբերել համապատասխան պատրաստվածություն փոփոխությունների ժամանակ և գտնել արդյունավետ լուծումներ ստեղծված իրավիճակներում

Կազմակերպել աշխատողների կատարողականի գնահատման գործընթացը

Մշակել և կիրառել աշխատողների գնահատման և խրախուսման մեխանիզմները

Բացահայտել աշխատողների ուսուցման և վերապատրաստման կարիքները

Իրականացնել շարունակական ուսուցման և վերապատրաստման ծրագրեր ու գնահատել դրանց արդյունավետությունը

Մշակել կոմպետենցիաներ յուրաքանչյուր պաշտոնական խմբի/դասի համար

Մանրամասներ

Տևողությունը՝ 5 օր, 2022թ. մայիսի 12, 13 ,19, 20, 21, ժամը 13:00-18:00

Դասերի օրերը՝ հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, ժամը 13:00-18:00

Մասնակիցների քանակը՝ մինչև 25 հոգի

Դասավանդման լեզուն՝ հայերեն

Վայրը՝ Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ

Արժեքը՝ 50.000 ՀՀ դրամ

ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, մասնակիցներին շնորհել ՇՄՋ 23 տեսական կրեդիտ, կտրվեն վկայականներ:

Թիրախային լսարան

Առողջապահական հաստատությունների ղեկավարներ և տնօրեններ

Ավագ բուժաշխատողներ

Առողջապահության ոլորտի աշխատակիցներ

ՄՌ աշխատակիցներ

Անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

Անձնագիր (պատճեն)

Դիպլոմ (պատճեն)

Ընդունելության գործընթաց

Դիմումների ընդունում. 2022թ. մայիսի 2-ից մինչև մայիսի 12-ը

Հարցերի դեպքում դիմել ԱԱԻ-ի ուսումնական բաժին:

Հեռ. +374 77 19-99-82

+374 11 30-00-88